# ՇՆՈՐՀԱՎՈՐ
# ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ


# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 3 - 4 (16398) ՇԱԲԱԹ, 16 ՀՈՒՆՎԱՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ, ՄԵՐ ՀԱՅԱԶԳԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ



**Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Վրաստանի հայազգի քաղաքացիներին շնորհավորեց Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության տոնի առթիվ:**

«Թանկագին համաքաղաքացիներ, ամբողջ սրտով շնորհավորում եմ Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության հիասքանչ տոների առթիվ: Հայերի ու վրացիների բարեկամությունը հազարամյակների պատմություն ունի: Վրաստանում ապրող հայազգի քաղաքացիները միշտ աշխատել են ի բարօրություն Վրաստանի: Թող 2016 թվականը ձեր եւ ձեր ընտանիքների համար լինի առողջության, երջանկության, խաղաղության եւ բարօրության տարի»,- ասված է Վրաստանի նախագահի շնորհավորական ուղերձում:

**Իր շնորհավորական ուղերձում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին** նշում է. «Ջերմորեն շնորհավորում եմ Վրաստանի հայազգի քաղաքացիներին Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ: Ժողովրդավարական Վրաստանի կառուցման գործին ակտիվ մասնակից մեր հայ հայրենակիցներին մաղթում եմ երջանկություն, բարօրություն: Թող 2016-ը ձեր եւ մեր ընդհանուր հայրենիք Վրաստանի համար լինի արտակարգ հաջողությունների եւ առաջընթացի տարի»:



*Վիրահայությանը Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության տոնի առթիվ շնորհավորանքներ հղեցին նաեւ արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարար Միխեիլ Գիորգաձեն, եվրոպական եւ եվրաատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան, Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին, պաշտոնական այլ անձինք:*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ



**Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության տոների կապակցությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին եւ վիրահայությանը հասցեագրված պատգամում իր շնորհավորանքն ու օրհնությունն է հղում վիրահայությանը: Վեհափառ Հայրապետի պատգամում, մասնավորապես, ասված է.**

«Սուրբ Ծննդյան շնորհներով զորացած՝ աներեր հավատքով ենք մուտք գործում Փրկչական 2016 թվական՝ աղոթքով, որպեսզի Մարդացյալ Աստծու օրհնության ներքո համայն աշխարհում, ի մասնավորի հակամարտությունների տառապանքներն ու զրկանքները կրող մերձավորարեւելյան տարածաշրջանում, առատանան հաշտությունն ու համերաշխությունը, դադարեն թշնամությունն ու հակառակությունը, մարդկանց հոգիներում թագավորեն սերն ու բարությունը, եւ ապահովությունն ու խաղաղությունը հաստատվեն նաեւ հայրենի մեր երկրի սահմաններում:

Փրկչի Սուրբ Ծննդյան հոգենորոգ առիթով աղոթում ենք, որ Տերը զորավիգ լինի Ձեզ, թեմիդ ուխտապահ եկեղեցականաց դասին, թեմական ու համայնքային վարչությանց պատվարժան անդամներին եւ հավատավոր Մեր զավակներին՝ պարգեւելով ամենքիդ քաջառողջություն, նորանոր ձեռքբերումներ եւ ամենայն բարիք՝ ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի եւ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու»:

## ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՀԱՏԿԱՊԵՍ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՄԵՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱԶԳԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ՍՊԱՆԵՐԻՆ»

### ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԸ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Թեա Ծուլուկիանին այս ելույթը ունեցավ հունվարի 5-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցում, որտեղ նշվում էր Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության ավետիսը:

- Այսօր շատ նշանակալից օր է ձեզ համար եւ նշանակալից գիշեր է լինելու մեզ համար: Մենք բոլորս էլ նույն երկրի զավակներն ենք, մեկ պետության ենք ծառայում, եւ այն տարբերությունը, որ կա մեր միջեւ,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



## ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ը ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՕՐՆ Է

Հունվարի 14-ին Վրաստանը նշեց պետական դրոշի օրը: Այդ կապակցությամբ, Վրաստանի մասշտաբով անցկացվեցին մի շարք միջոցառումներ: Տոնական միջոցառումների մեկնարկը տրվեց Բաթումիում, որտեղ հանդիսավորապես յունկերների հուշահամալիրում բարձրացվեց պետական դրոշը: Դրոշի բարձրացմամբ արարողություններ անցկացվեցին եւս մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Ախալցիխեում:

Հունվարի 14-ի կեսօրին պետական դրոշի բարձրացման հանդիսավոր արարողությունն անցկացվեց Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում: Արարողությանը ելույթ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, որը երկրի բնակչությանը շնորհավորեց տոնի առթիվ:

Նույն օրվա երեկոյան պետական դրոշի տոնի առթիվ նախագահական նստավայրում Գիորգի Մարգվելաշվիլու եւ առաջին տիկին Մակա Չիչուայի մասնակցությամբ անցկացվեց հանդիսավոր ընդունելություն:

## ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ

### ՋՐՕՐՀՆԵՔԻ ԽԱՉՔԱՎՈՐԸ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՅՈՒՐԻ ԵՐԵՄՅԱՆՆ ԷՐ

***2016 թվականի առաջին տաղավար տոնը՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության ավետիսը, Վիրահայոց թեմում նշվեց մեծ հանդիսությամբ:***



**Նկարում.- Ձախից՝ Ջրօրհնեքի կնքահայր Յուրի Երեմյանը, Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւ Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանը**

Հունվարի 5-ի երեկոյան տոնական տրամադրություն էր տիրում հավատացյալներով լի՝ Թբիլիսիի Վիրահայոց թեմի առաջնորդանիստ, վերակառուցված Սուրբ Գեւորգ եկեղեցում: Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Սուրբ ու Անմահ պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Տոնական պատարագին ներկա էին Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելին, Վրաստանի բռնագրավված տարածքների եւ փախստականների հարցերով նախարար Սոզար Սուբարին, Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն, Վրաստանի նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին, փոխնախարար Բեսարիոն Լոլաձեն, Գլխավոր շտաբի պետի տեղակալ Նիկա Ագլաձեն, Վրաստա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

...նի մարդու իրավունքների պաշտպանի տեղակալ Կոբա Չոպլիանին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Ռուսլան Պողոսյանը, Սերգո Ռատիանին, Համայն Վրաստանի մուսուլմանների վարչության մուֆթ Յասին Ալիեւը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանաստեղծ, թարգմանիչներ Գիվի Շահնազարը եւ Անահիտ Բոստանջյանը, համայնքային կառույցների ներկայացուցիչներ:



Սուրբ Ծննդյան պատարագ Ախալքալաքիի Սուրբ Խաչ եկեղեցում

Սուրբ Ծննդյան պատարագին ներկա էր նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը՝ տիկնոջ հետ:

Հընթացս Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության տոնի առիթով:



Ջրօրհնեքի արարողությունը Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եկեղեցում

Սուրբ պատարագի վերջում թեմակալ առաջնորդի հանդիսապետությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Այս տարի Ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր Վրաստանի պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության գլխավոր վարչության պետի տեղակալ, փոխգնդապետ Յուրի Երեմյանը: Նշենք նաեւ, որ Յուրին հայտնի պատմաբան, ակադեմիկոս Սուրեն Երեմյանի եղբոր թոռն է:

Հայ հավատացյալներին տոնի կապակցությամբ Վրաստանի իշխանությունների անունից շնորհավորեց Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելին (ելույթը տպագրվում է այս համարում):

* * *

Այդ օրը Բաթումիի, Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի եկեղեցիներում մատուցվեցին տոնական Սուրբ պատարագներ:

Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում Տեր Արարատ քահանա Գումբալյանը մատուցեց Սուրբ պատարագ, որին ներկա էին Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը, եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար Իրակլի Բերիձեն:

* * *

Ախալքալաքիի Սուրբ Խաչ եկեղեցում պատարագիչն էր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգէն վարդապետ Սալբիյանը:

* * *

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հոգեւոր տեսուչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանի գլխավորությամբ Մառնեուլիի, Ծալկայի, Թեթրիծղարոյի շրջանների եկեղեցիներում կատարվեցին Ջրօրհնեքի արարողություններ:

*Լուսանկարները՝*
*ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ*

# ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՀԱՏԿԱՊԵՍ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՄԵՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱԶԳԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ՍՊԱՆԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

...դա ամենամեծ հարստությունն է, որ ունի վրաց պետությունը: Ուզում եմ շնորհակալություն հայտնել նաեւ մուֆթին, մեզ համար ադրբեջանցին նույնքան թանկ է, որքան մեր երկրի մյուս քաղաքացին: Եվ շատ կարեւոր է, որ մենք բոլորս այսօր միասին այստեղ ենք, այս եկեղեցում: Ուզում եմ նորից ընդգծել, որ անկախ այն բանից, թե որ եկեղեցու հետեւորդն ենք, բոլորս էլ նույն բանի համար ենք աղոթում՝ Վրաստանում ու ամբողջ աշխարհում խաղաղության համար: Համոզված եմ, որ այն ծառայությունը, սերը, որը մեզ միավորում է, մենք կկարողանանք ավելի լավ երկրում ապրել, ավելի շատ սեր, խաղաղություն լինի մեր շուրջը եւ միասին հասնենք խաղաղության: Ուզում եմ շնորհավորել մեր հայ համաքաղաքացիներին, նաեւ ողջ հայությանը այսօրվա տոնի առիթով, ցանկանալ խաղաղ, բարեհաջող տարի: Հատկապես ուզում եմ շնորհավորել մեր բանակի հայազգի զինվորներին ու սպաներին: Նրանք բոլորն էլ հավատարմորեն են ծառայում մեր ընդհանուր հայրենիքին, իրենց երկրի պահակակետում են կանգնած: Ինձ համար մեծ պատիվ է լինել ինչպես նրանց, այնպես էլ՝ Վրաստանի քաղաքացիների պաշտպանության նախարարը եւ մեծ պատիվ է այսօր լինել այստեղ, այս վերանորոգված եկեղեցուց իմ շնորհավորանքի խոսքն ուղղել առաջին հերթին մեր հայ զինծառայողներին ու բոլորին Վրաստանում եւ ողջ աշխարհում Սուրբ Ծննդյան տոնի առթիվ: Չնայած կրոնական որոշ տարբերությունների, հիրավի, հենց այս բազմազանության մեջ է պետության ամենամեծ հիմայքն ու ուժը: Իրոք, Վրաստանը շատ հզոր է, որովհետեւ մենք կարող ենք իրար հետ, ուս-ուսի պայքարել մեր միասնական հայրենիքի, մեր պետության զորացման եւ հաղթանակի համար:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ**

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐԳԱՐԺԱՆ ԲԺԻՇԿ ԼԵՎՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Բժիշկ. հույս ու հավատ հիվանդի համար... Սակայն ամեն մի մասնագետ առաջին հերթին Մարդ-կոչումն է կրում, իսկ այն առավել եւս բժիշկ-մարդուն է հատուկ...

Այո, արդեն չորս տարի է ես անձամբ ճանաչեցի մեծատառով Բժշկի. նրա մարդասիրությունը, համբերատարությունը եւ անշահախնդիր գործունեությունը զարմանք է պատճառում հիվանդին: Նա մեծ հոգու տեր մարդ է՝ իր կոչմանն արժանի, գործին նվիրյալ...

13.06.2011թ. մեկամսյա վախվորած տառապանք, սրտի ծակոցներ, վատ զգացողություն, ծանր շնչառություն... եւ ի վերջո դիմեցի Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Խորհուրդ տվեցին դիմել կենտրոնի սրտաբանական բաժանմունքի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու Լեւոն Քոչարյանին:

- Վիճակս վատ էր, բայց...

Մի փոքր տարօրինակ թվաց ինձ. լուրջ, խոհեմ, տարբեր զննումներից հետո (իմհիջայլոց, նաեւ նրա բաժանմունքի բոլոր աշխատակիցների), հոգատար վերաբերմունքը իմ մեջ ծնեց մեծ հավատ ու հարգանք բոլորի հանդեպ:

Բաժանմունքն ունի գերհագեցած ժամանակակից սարքավորումներ՝ ըստ այցելուների...

Հրաշագործ բժշկի շնորհիվ արդեն ես ինձ լավ եմ զգում եւ ոչ միօր չեմ կտրվել իմ սիրելի մանկավարժական աշխատանքից: Հարկ եղած դեպքում, բժիշկը ժամանակ է գտնում պատասխանելու նաեւ հեռախոսազանգերի:

Այո, հիվանդի համար բժիշկը ինչ-որ տեղ հավատ է նաեւ, բացի կոչումին արժանի լինելուց:

Շնորհակալություն, բժիշկ մեծանուն, իմ եւ Ախալքալաքիից Ձեր բուժումը ստացած մարդկանց անունից. ցանկանում ենք երկար տարիների բժիշկ-փրկարարի գործունեություն, համբերություն եւ նորանոր նվաճումներ գիտության բնագավառում...

*ԶԻՆԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆ*
*Ախալքալաքիի շրջանի Կարտիկամի հանրային դպրոցի փոխտնօրեն*
*ՎՀ վաստակավոր ուսուցիչ*

# «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՊԱՐՈՆ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԻՆ

Թույլ տվեք Ձեզ եւ Ձեր գլխավորած «Վրաստան» թերթի բոլոր աշխատակիցներին սրտանց շնորհավորել Նոր տարվա առթիվ, մաղթել ձեզ ամենայն բարիք, առողջություն, հաջողություններ, բազում տարիներ՝ ձեր շնորհակալ աշխատանքում:

Օգտվելով առիթից՝ «Վրաստան» թերթի միջոցով, ուզում եմ մեծ սիրով 2016 թվականի առթիվ շնորհավորել Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին եւ առաջնորդանիստ եկեղեցու տնտեսվար Մարգարիտա Կիրակոսյանին: Նրանց նախաձեռնությամբ վերջին 8-9 տարիների ընթացքում օգնություն էր ցուցաբերվում իմ դուստր Նանա Փիրցխալաշվիլուն, իսկ նրա վախճանից հետո, մինչ օրս՝ մեր ընտանիքին:

Իմ բարեմաղթանքներն եմ հղում Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, մաղթում նրան երկարակեցություն, առողջություն եւ հաջողություններ՝ ի փառս մեր ժողովրդի:

*Խորին հարգանքներով՝*
*ՌԻՄԱ ԽԱՄԽԱՁԵ*



ԹՈՒՐՔԻԱ

## ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

*Հունվարի 12-ի առավոտյան, Ստամբուլի կենտրոնական Սուլթանահմեթ հրապարակում տեղի ունեցած հզոր պայթյունի հետեւանքով, զոհվել է 10 մարդ, 15-ը՝ վիրավորվել: Նահանգապետարանի հաղորդագրության մեջ ասվում է, որ ներկայումս ուսումնասիրվում են պայթյունի պատճառը, տեսակը, միջադեպը մեկ մարդու կամ մի քանի մարդու կողմից իրագործված լինելու հանգամանքները:*

*Թուրքական ԶԼՄ-ներն ավելի վաղ հայտնել էին, որ, նախնական վարկածով, հնարավոր է՝ պայթյունն իրագործվել է մահապարտ ահաբեկչի կողմից:*

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ

## ՓՈՐՁԱՐԿՎԵՑ ՋՐԱԾՆԱՅԻՆ ՌՈՒՄԲ

*Հունվարի վեցին Հյուսիսային Կորեան հայտարարեց ջրածնային ռումբի հաջողված ստորգետնյա փորձարկումների մասին: Հյուսիսային Կորեայի կողմից նման հզոր զենքի փորձարկմանը առաջինն արձագանքեցին Ճապոնիան եւ Հարավային Կորեան: Անհանգստության սկզբնական առիթ էր հանդիսացել Հյուսիսային Կորեայի տարածքում գրանցված երկրաշարժը:*

*Պաշտոնական Փհենյանի դիրքորոշմամբ, միջուկային զինատեսակների զարգացումն անհրաժեշտ է Հյուսիսային Կորեային ԱՄՆ-ից պաշտպանվելու համար:*

*Հյուսիսային Կորեայի կողմից ջրածնային ռումբի օգտագործման վերաբերյալ, կարծիքների փոխանակում է տեղի ունեցել Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ: Նշվում է, որ կողմերն անհանգստություն են հայտնել Փհենյանի գործողությունների կապակցությամբ, որոնք հանդիսանում են ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան հռչակագրերի խախտում:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՄԵԾԱՆՈՒՄ Է ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀՈՍՔԸ

*2016 թվականի հունվարի 1-ից մինչեւ 11-ը Միջերկրական ծովով Եվրոպա է ժամանել 18 հազար 882 միգրանտ ու փախստական, 53 մարդ զոհվել է ծովում: Այդ մասին հայտնել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) պաշտոնական ներկայացուցիչ Ջոել Միլմանը:*

*«Միջերկրական ծովով Եվրոպա ժամանած միգրանտների թիվը 2016 թվականի առաջին 11 օրվա ընթացքում հասել է 18 հազար 882-ի,- նշել է նա:- Միջին հաշվով, օրական ժամանում է ավելի քան 1700 մարդ»:*

*Հիմնական հոսքը, ինչպես եղել է 2015 թվականին, այժմ ուղեւորվում է Հունաստան, ուր ընթացիկ տարվա սկզբից ժամանել է 18 հազար 615 մարդ: Իտալիայում գրանցվել է 257 ժամանած: Ինչպես նշել է Միլմանը, անցյալ տարի Հունաստան միգրանտներ ու փախստականներ են ժամանել ավելի քան 70 երկրից՝ շուրջ 850 հազար մարդ: Հիմնականում նրանք սիրիացիներ են (շուրջ 486 հազար մարդ), աֆղանցիներ (ավելի քան 205 հազար) եւ իրաքցիներ (շուրջ 87 հազար մարդ):*

*Ըստ ՄՄԿ-ի տվյալների, ընդամենը 2015 թվականին Միջերկրական ծովով Եվրոպա է ժամանել 1 մլն 4 հազար 356 միգրանտ ու փախստական: Սա ավելի քան քառակի շատ է, քան 2014 թվականին, երբ ժամանածների թիվը 219 հազար մարդ էր:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԴԵՌԵՎՍ ԵՆԹԱԿԱ Է ԲԱՐԵՓՈԽՄԱՆ




*Հունվարի 8-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրեց ընտրական օրենսգրքի փոփոխությունները: Նշենք, որ ընտրական օրենսգրքի հետ կապված երկու օրինանախագծերը Վրաստանի խորհրդարանը հաստատեց անցյալ տարվա դեկտեմբերի վերջին եւ, համաձայն այդ փոփոխությունների, միավորման կամ անջատման հիման վրա փոխվեցին 73 մեծամասնական ընտրատարածքների սահմանները:*

Հատուկ հրավիրված ճեպասուլիսում, Վրաստանի նախագահը հաստատելով խորհրդարանի կողմից ընդունած օրինանախագծի ստորագրման փաստը, նշեց, որ օրինանախագծում ներկայացված փոփոխություններն այն փոփոխությունները չէին, որ վերջին տարիներին բանավեճեր էին տարվում: «Փոփոխությունները պայմանավորված էին Սահմանադրական դատարանի որոշմամբ ու պահանջներով եւ կրում էին տեխնիկական բնույթ: Իրականում ընտրական բարեփոխումները, որոնք լրիվությամբ համաձայնեցված կլինեին քաղաքական միավորների կողմից եւ կհաստատեին միասնական կանոնները, մենք դեռեւս չունենք: Միաժամանակ նշանակալից է, որ 2015 թվականին մեր քաղաքական սպեկտրում այդ ուղղությամբ կարեւորագույն գործընթաց սկսվեց: Փաստորեն ողջ քաղաքական սպեկտրը, ընդդիմադիր կուսակցություններն ու կառավարող կոալիցիան, ձեւավորվեցին այն հարցով, որ վրացական ընտրական համակարգը պետք է վերափոխվի: Դրա պատասխանը եւս ակնհայտ է, լավագույնը՝ համամասնական համակարգին անցումն է»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին եւ հավելեց. «Ողջ քաղաքական սպեկտրը, ոչ կառավարական կազմակերպությունները, մեր արտասահմանյան գործընկերներն ու, առավել եւս, 240 հազար Վրաստանի քաղաքացիները ստորագրել են դիմում եւ հայտարարում են, որ ընտրական բարեփոխումները հարկ է իրականացնել 2016 թվականին: Սակայն կառավարող կոալիցիայում այդ դիրոքորոշման հետ համաձայն չեն եւ գտնում են, որ փոփոխությունները հարկ է անցկացնել 2020 թվականին: Անհասկանալի է՝ ինչո՞ւ չորս տարով պետք է հետաձգենք բարեփոխումը, որն արժանացել է բոլորի հավանությանը: Քաղաքական բոլոր ուժերին կոչ եմ անում է'լ ավելի ինտենսիվացնել խորհրդատվությունները, որպեսզի տվյալ հարցում հասնենք միասնական որոշման»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԱՆՕԹԵՎԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՊԱՇՏՊԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»




*Հունվարի 15-ին Վրաստանի կառավարությունը քննարկեց երկրի արդարադատության նախարարության կողմից մշակված օրինանախագիծը, ըստ որի, անօթեւան եւ աշխատող երեխաների իրավունքները պաշտպանելու է պետությունը:*

Ինչպես նշեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, օրինանախագծում ներառված է «Անօթեւան երեխա» հասկացությունը, եւ այդ կարգավիճակին կառնչվեն մի շարք հանրային սպասարկումներ: «Մեր թե' պետության եւ թե' հասարակության ընդհանուր ցավը փողոցներում ապրող ու աշխատող երեխաներն են: Բոլոր երեխաներն ունեն կրթություն ստանալու իրավունք, ուստի գործընկեր կազմակերպությունների ու համապատասխան նախարարությունների հետ մշակել ենք փոփոխությունների փաթեթ, որն այսօր միաձայն ընդունվեց կառավարության կողմից եւ ուղղված է անօթեւան երեխաների պաշտպանությանը»,- հայտարարեց Ծուլուկիանին:

Արդարադատության նախարարն անդրադարձավ նաեւ Իրաքից ժամանած ուսանողների կեցության վկայականի գործողության դադարեցման թեմային: Նախարարի պարզաբանմամբ, դա առնչվում է երկրի անվտանգությանը: «Այդ մարդիկ որոշումը կարող են բողոքարկել դատարանում»,- հայտարարեց Ծուլուկիանին:

## ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ԵՆ

*Ընթացիկ տարվա հունվարից ուժի մեջ է մտել ծովի մակերեւույթից 800 եւ ավելի մետր բարձրության վրա գտնվող գյուղերի բնակիչների համար սոցիալական եւ հարկային արտոնությունների մասին օրենքը:*

Վերոնշյալ օրենքով, օգնություն կարող են ստանալ ավելի քան 1580 գյուղերի բնակիչները: Օրենքին համապատասխան, մեկ տարվա ընթացքում ընտանիքները առաջին եւ երկրորդ երեխայի համար կստանան 100-ական լարի, իսկ հաջորդ երեխաների համար՝ 200 լարի: Բարձրալեռ գյուղի բնակչի կարգավիճակ կստանան բոլոր նրանք, ովքեր ինն ամսից ավելի ապրում են բարձրալեռ գյուղերում: 180 լարիի սահմաններում հավելավճարներ կստանան մանկավարժները, բուժքույրերը, իսկ բժիշկների հավելավճարը կկազմի 360 լարի: Ընթացիկ տարվա սեպտեմբերից 20 տոկոսով կավելացվի բարձրալեռ գյուղերի բնակիչների կենսաթոշակը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՎՐԱՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐՆ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

*Վրացի զինծառայողները ժամանել են Աֆղանստանի Մազարի Շարիֆ քաղաք՝ մասնակցելու «Վճռական աջակցություն» (Resolute Support) խաղաղարար առաքելությանը:*

Այդ մասին հաղորդեց Վրաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը: Վրացի զինծառայողները 2015 թվականի հունվարից մասնակցում են «Վճռական աջակցություն» ոչ մարտական առաքելությանը եւ ուսուցանում ու օգնություն են ցուցաբերում Աֆղանստանի կառավարական ուժերին: Վրաստանի զինված ուժերի երրորդ հետեւակային բրիգադի 32-րդ գումարտակի «Բրավո» վաշտի զինվորականների ճանապարհումը Մազարի Շարիֆ տեղի է ունեցել մի քանի օր առաջ Վազիանիի (Թբիլիսիի արվարձան) ռազմակայանում:

Վրացի զինվորականները ծառայությունը կրելու են գերմանական զորախմբի կազմում: Նրանց պարտականությունները ներառելու են արագ արձագանքման առաջադրանքները, ինչպես նաեւ «Մարմալ» ռազմակայանի անվտանգության ապահովումը:

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

## ՄԵԼԱՆՅԱ ՄԱՐԱԲՅԱՆ

Կյանքից անժամանակ հեռացավ վաստակաշատ մանկավարժ, ճանաչված մտավորական Մելանյա Մարտինի Մարաբյանը (Թարզյան): Նա ապրեց ընդամենը 63 տարի, բայց շատ բան արեց մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության համար, խոր հետք թողեց անցած ճանապարհի վրա:

Ծնվել է Վրաստանի Բոգդանովկայի շրջանի (այժմ՝ Նինոծմինդա) Ուչմանա գյուղում, մտավորականի ընտանիքում: Բոգդանովկայի ռուսական դպրոցի շրջանավարտը բարձրագույնը շարունակել է Երեւանի Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի եւ գրականության ֆակուլտետում:

Բուհը բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո, Մելանյա Մարաբյանը աշխատանքի է անցել Բոգդանովկայի թիվ 1 հայկական դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի: Շրջկենտրոնի մայր կրթօջախում հարգելի Մելանյան շուրջ 40 տարի մանկավարժ է աշխատել՝ դասավանդելով ռուսաց լեզու: Նա ամեն կերպ ձգտել է հարուստ գիտելիքներ տալ իր սաներին, դաստիարակել երկրին արժանի քաղաքացիների ոգով: Իր անբասիր, անխոնջ ու սրտացավ աշխատանքի համար արժանացել է պատվոգրերի, վայելել է աշակերտության ու ծնողների սերն ու հարգանքը: Նրա սաներից շատերը դարձել են գիտնականներ, բժիշկներ ու ինժեներներ, մանկավարժներ: Մյուսները սովորում են տարբեր բուհերում:



Սիրելի Մելանյա, քո պայծառ հիշատակը միշտ վառ կմնա ամուսնուդ, զավակներիդ, ընկերներիդ, բոլոր քեզ ճանաչողների սրտերում:

*ՀԱՐԱԶԱՏՆԵՐ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ*



### ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏԻԺԸ ԿԱՐԳԵԼՎԻ ՕՐԵՆՔՈՎ

*Նախնական եւ նախադպրոցական դաստիարակության ոլորտում կարգավորումները կիրականացվեն հատուկ օրենքով: Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Էկա Բեսելիայի, Գեդեւան Փոփխաձեի եւ Օթար Չրդիլելու նախաձեռնությամբ, խորհրդարանին առաջադրվել է «Նախնական եւ նախադպրոցական դաստիարակության ու կրթության մասին» օրինանախագիծը եւ դրանից բխող, 15 օրենքում իրականացվելիք փոփոխությունների փաթեթը: Օրինանախագիծը նախատեսում է վերոնշյալ ոլորտում կենտրոնական իշխանության դերի ու իրավասության սահմանումը:*

*Նշենք, որ, ներկա դրությամբ, վերոնշյալ ուղղությունը կարգավորող միասնական օրենսդրություն գոյություն չունի: Ինչպես նշեցին օրինանախագծի հեղինակները, փաթեթում ներառված են բոլոր այն չափորոշիչները, որոնք պետք է կարգավորեն նախնական եւ նախադպրոցական դաստիարակության ու կրթության ոլորտը:*

### ԳՆԴԱԿՈԾՎԵԼ Է ՓՈԹԻԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՄԵՔԵՆԱՆ

*Հունվարի 15-ին Փոթիում կրակ են բացել քաղաքի դատախազ Ալեքսանդր Գոգուաձեի «Հյունդայ» մակնիշի ավտոմեքենայի վրա: Նախնական տվյալներով, արձակվել է չորս կրակոց: Հրաձիգը հետիոտն է եղել: Ավտոմեքենան վարում էր դատախազն ինքը:*

*Հրաձգությունից ոչ ոք չի տուժել: Կոտրվել են ավտոմեքենայի ապակիները:*

*Պատահարի վայրում աշխատում են իրավապահները: Հանցագործության դրդապատճառները հայտնի չեն: Կրակողը թաքնվել է հանցագործության վայրից:*

### ԱԲԽԱԶԻԱՆ ՄԻԱՑԱՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

*Աբխազիայի դե-ֆակտո իշխանությունները որոշում են ընդունել՝ միանալ Մոսկվայի կողմից Թուրքիայի նկատմամբ սահմանված պատժամիջոցներին:*

*Աբխազիայի ինքնահռչակ հանրապետության կառավարության կայքում զետեղված հաղորդագրության մեջ ճշտվում է, որ մինչեւ հունվարի 20-ը հանրապետության տարբեր գերատեսչություններ պետք է պատրաստեն հնարավոր սահմանափակիչ միջոցների ցուցակը:*

*Մասնավորապես, Աբխազիայի իշխանությունները պլանավորում են սահմանափակել Թուրքիայից առանձին ապրանքների ներմուծումը, ուժեղացնել հսկողությունը թուրքական ոչ առեւտրային կազմակերպությունների նկատմամբ, ինչպես նաեւ արգելել պետական աջակցությունը թուրքական ձեռնարկություններին:*

*Հաղորդագրության մեջ նշվում է, որ հանրապետությունը այդ քայլին է դիմել դաշնակցության եւ ռազմակավարական գործընկերության մասին պայմանագրին համապատասխան, որն Աբխազիան Ռուսաստանի հետ ստորագրել է 2014 թվականին:*

### ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ՝ ԳՈՒԴԱՈՒՐԻՈՒՄ

*Գուդաուրիի լեռնադահուկային մարզուղու վրա տեղի ունեցավ դժբախտ պատահար: Մեծ արագությամբ դահուկներով սահող մի երիտասարդ ընդհարվել է 12-ամյա Սալոմե Տատիշվիլուն: Ընդհարման արդյունքում աղջիկը տեղում մահացել էր:*

*Տեղի ունեցածի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ:*

ՀՈԲԵԼՅԱՆ

# ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Թբիլիսցի աշխարհահռչակ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի (1926-1990) «Մոռացված նախնիների ստվերները», «Ծաղիկը քարի վրա», «Նռան գույնը», «Սուրամի ամրոցի գաղտնիքը» եւ այլ ֆիլմերը վաղուց դարձել են համայն մարդկության մշակութային արժեքներ: Հունվարի 9-ին նա կդառնար 92 տարեկան:*

Ի նշանավորումն տարեդարձի, Վրաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ, «Վրացահայերի միություն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, Վրաստանի խորհրդարանի գրադարանում կայացավ մեծ վարպետին նվիրված երեկո: Հավաքվածներին դիմեցին Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը, լուսանկարիչ Մայիս Դեհիսիձեն, կինոռեժիսոր Ալեքսանդր Կերեսելիձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:



Երեկոն իրենց ներկայությամբ պատվեցին Վրաստանում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար Էլինա Մկրտչյանը, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի գիտության Ազգային ակադեմիայի ԱՄՆ-ի ու Կանադայի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Կաճարավան, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող Կարինե Մանուկյանը, երկրի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ղեկավար Բելլա Օսիպովան, «Վրաստանի գիտահետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ պրոֆեսոր Էմմա Ախտյանը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը, Թբիլիսիի սակրեբուլոյի «Վրացական երազանք» խմբակցությանը կից ազգային փոքրամասնությունների խորհրդի համակարգող Մարգարիտա Խիդիրբեգաշվիլին, ուրիշներ:

Երեկոյին ամփոփվեցին «Սերգեյ Փարաջանովի անվան ստեղծագործական մրցույթի» արդյունքները, որտեղ մի շարք ուսանողներ եւ աշակերտներ ներկայացրել էին իրենց փարաջանովյան թեմաներով ձեռագործ աշխատանքները: Հաղթող ճանաչվածներին տրվեցին Բակուրիանիում հանգստանալու ուղեգրեր ու պատվոգրեր:

Ս.Փարաջանովի ծննդյան օրը նշեցին նաեւ մի խումբ հայարտունցիներ: Նրանք այցելեցին Թբիլիսիում Մեյդան-Շարդենի թաղամասում գտնվող Մանթաշովյան շարքերի պատին տեղադրված Սերգեյ Փարաջանովի պղնձաձույլ հուշարձանին, որի հեղինակը Վաժա Միքաբերիձեն է: Սուրբ Գրիգոր Նարեկացի կիրակնօրյա դպրոցի սաները իրենց խոնարհումը բերեցին մեծատաղանդ արվեստագետի հիշատակին ու Փարաջանովի հուշարձանը զարդարեցին նրա սիրած նռներով ու ծաղիկներով:

Վիրահայոց թեմի Քվեմո Քարթլիի հոգեւոր-տեսուչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը աղոթք բարձրացրեց անվանի հանճարի հոգու խաղաղության համար: Խոսքով հանդես եկան «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանն ու մանկո խոսնակ Սուսաննա Խաչատրյանը:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԿԱՆԽԱԳԾՈՒՄ

# ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԳԵՐԱԶԱՆՑԻ 3 ՏՈԿՈՍԻ ԲՆԱԳԻԾԸ»

*Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, տարածաշրջանի երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, ստեղծված իրավիճակը չի նպաստում տնտեսական կոնկրետ աճին:*




Նրա կանխագուշակումներով, 2016 թվականը կլինի բարդություններով հագեցված, թեպետ նախարարի հավաստմամբ, տնտեսական աճը կգերազանցի 3 տոկոսի բնագիծը: «2016 թվականը կլինի ծանր, եթե հաշվի առնենք տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Մեզ համար մեծ նշանակություն ունի այն, թե համաշխարհային շուկայում նավթի գնի ուղղությամբ ինչ զարգացումներ կլինեն: Դա նշանակալից է այն առումով, որ նավթը կազմում է այն երկրների եկամուտը, հետեւաբար, հնարավոր ներդրողների եկամուտը, ովքեր գործընկերային հարաբերություններ ունեն մեզ հետ: Միաժամանակ, ցանկանում եմ ասել, որ մենք աշխատանքներ ենք տանում հնարավոր ռիսկերի ուսումնասիրության ուղղությամբ եւ մեր բյուջեն կազմել ենք այնպես, որ նախատեսել ենք մի շարք հանգամանքներ: Խորապես համոզված ենք, որ 2016-ը կլինի շատ ավելի բարենպաստ եւ տնտեսական աճը կգերազանցի 3 տոկոսի բնագիծը»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

ՄՇԱԿՈՒՅԹ

# «ՇՆՈՐՀԱՎՈՐ ՁԵՐ ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԿԱՄ ԴԵՐԱՍԱՆԸ ՊԵՏՔ Է ՍՊԱՍԵԼՈՒ ՈՒ ԱՅԴ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ»

*2002-ին Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրված «Չառլիի մորաքույրը» ներկայացման մեջ՝ Էննին, դերասանուհի Լյուբա Սահակյանի կերպարներից առաջինն էր: Թեեւ հանդիսատեսի կողմից հիշվող ու սիրված այս կատակերգությունից առաջ, որպես թատերական ստուդիայի ուսանող, նա մարմնավորել էր Տատիկին՝ «Զնե թագուհու» մեջ... թվում է պարզապես ուսանողական քննություն. դիպլոմային աշխատանք էր: Բայց իրենից անկախ ու ինքնաբերաբար տատիկն իբրեւ հոգատարության խորհրդանիշ, ապրեց նրա մեջ ցայսօր: Բնավ, սրանք Լյուբայի խոսքերը չեն, այլ հստակ եզրակացություն՝ իմ ու նրա զրույցից:*



Հմայիչ դերասանուհին, որ թատրոնի ներկա հունձքի ներկայացուցիչներից է, մշակույթի այս խոշոր օջախի անդամն է 2001-ից: Հենց այն պահից, երբ ավարտեց Թբիլիսիի ջազի ու շուբիզնեսի ակադեմիան (այդ տարիներին գործում էր Թբիլիսիի Դ.Աղմաշենեբելու պողոտայի վրա գտնվող Երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքում) եւ զուգահեռ՝ թատրոնի թատերական ստուդիան: Սրանք այն տարիներն էին, երբ վիրահայոց թատրոնի բեմում դեռ փայլում էին մեծ վարպետներ Սերիկ Շեկոյանը, Սոս Սոսյանը, Ավետիք Սանոսյանը, Ասյա Ժամկոչյանը, մյուսները: Նորի հետ հինն իր մեջ առնելու լայն ու երանելի հնարավորություն կար, որի ձգող ուժն ընդմիշտ կապեց նրան թատրոնի հետ:

**- Թատրոնն իմ ընտանիքը համարեցի առաջին իսկ պահից: Այլապես եւ միգուցե, այն ինքը չընդուներ ինձ, չպահեր: Եկա բոլորովին պատահական, ընկերուհուս հորդորով: Այսօր թատրոնը ոչ միայն իմ աշխատանքն է, այլեւ կյանքը եւ, ամենակարեւորը, ընտանիքը: Դժբախտաբար, ես վաղաժամ եմ կորցրել ծնողներիս, դեռ չեմ կազմել սեփական ընտանիքս, եւ միգուցե այդ է պատճառը, որ օրվա յուրաքանչյուր պահի կապում եմ թատրոնի հետ**,- ասում է Լյուբան:- **Ի դեպ, երբ թատրոն եկա, գրեթե չէի տիրապետում հայերենին, հենց այստեղ սովորեցի մայրենիս, մերձեցա գրականությանը, մշակույթին:**

Լյուբան մարմնավորել է բազմաթիվ մեծ ու փոքր կերպարներ («Դուք ողջ լինեք», «Բեռնարդա Ալբայի բնակարանը», «Ես եւ դու», «Անձրեւ վաճառողը», «Սիրային քառանկյուն», «Անտեսանելի գլխարկ», «Փախիր կնոջիցդ», «Անմեղսունակների պարը» եւ այլն): Նա խաղացել է նաեւ էպիզոդային ու զանգվածային դերերում: Այդուհանդերձ, առանձնացնել մեկը մյուսից կամ տարբերել՝ լավ ու վատ անվանելով, չցանկացավ:

**- Միգուցե քննադատվի ասելիքս**,- ասում է Լյուբան,- **բայց ինձ համար մեծ ու փոքր դերեր, այնպես էլ՝ մեծ ու փոքր բեմեր չկան: Բոլորովին վերջերս նույնիսկ, երբ մեր թատրոնում ներկայացում էր բեմադրվում եւ հարկավոր էր զանգվածային խաղ, ես անտարակույս համաձայնեցի: Ինձ հաճախ բավական է դառնում միայն բեմելը, հանդիսատեսի հետ հանդիպումը: Ի դեպ, նման մի դեպք էր գրանցվել Վանաձորում. «40 օր Համբարձումից առաջ» ներկայացման մեջ, ռեժիսորի հնարանքով, մի կերպար էր հայտնվել, որ պարզապես նստած էր անկյուններից մեկում, եւ նրա գործառույթն էր լռել ու ժամանակ առ ժամանակ դիմախաղ օգտագործել: Կերպարը գրեթե գերազանցել էր գլխավոր դերակատարին՝ սոսկ լռությամբ: Ահա այս է իմ նշանաբանը:**

**Տարիների հետ մի տեսակ ավելի դժվար է դառնում դեր մարմնավորել**,- շարունակում է Լյուբան:- **Միգուցե ներքին պայքար կա՝ եսի ու կերպարի միջեւ: Օրինակ, շատ եմ հուզվել Բեռնարդա Ալբայի դստեր կամ «Անձրեւ վաճառողի» մեջ՝ Լիզիի կերպարները մարմնավորելիս: Մեկը՝ արտաքին աշխարհից ուրիշի կողմից փակված, մյուսը՝ ինքն իրեն արտաքին աշխարհից փակող... բարդ էր, հատկապես վերջինը, որովհետեւ ինքս բաց եմ: Բայց հաջողացրի ու շատ հպարտ եմ իմ հաղթանակով, որովհետեւ «ես»-իդ խնդիրները պետք է երբեք չխանգարեն կերպարին: Հետաքրքիր էր նաեւ «Ես եւ դու»-ն, որ զուգախաղ էր մեր թատրոնի շատ շնորհալի երիտասարդ դերասանուհու՝ Գլորիա Գեւորգյանի հետ, եւ այս պարագայում ներկայանում էի որպես առավել փարձառու, ավաղ:**

Ինչպես խոստովանում է Լյուբան, դերերից գրեթե յուրաքանչյուրն իր կրկնությունն է գտել իրական կյանքում: Եվ այս պարագայում, օգնության հենց թատրոնն է եկել՝ կերպարների փորձով, խորհրդավորությամբ, նաեւ ընտանիքի անդամներով: «Աստված չանի, որ այս վերջինն էլ կրկնվի»,- կատակեց Լյուբան՝ հիշելով Կարինեին «Անմեղսունակների պարից», որին փողը մոռացնել էր տվել թերեւս ամենաասուրբը՝ ընտանիքը:

Որպես բեմի կնքահայր՝ Լյուբան առանձնացնում է Լեւոն Ուզունյանին: Ասում է, որ հենց նա է «կերտել» իր այսօրվա կերպարը, այդուհանդերձ...

**- Մեր թատրոնի դերասաններից ու աշխատողներից յուրաքանչյուրը կարեւոր ներդրում է ունեցել ստեղծագործական աճիս մեջ**,- շեշտում է նա:- **Իսկ մեր թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը ոչ միայն մեծ դեր է խաղացել որպես ռեժիսոր, այլեւ մարդ, ով միշտ օգնության է հասել ու ճիշտ ճանապարհի մատնանշել: Ինձ համար բավական հետաքրքիր էր նաեւ Ռոման Մաթիաշվիլու հետ իմ առաջին համագործակցությունը, երբ բեմադրեցինք «Անմեղսունակների պարը», ապա նաեւ երիտասարդներից՝ Ջուլետա Սաղաթելյանի ու Գագիկ Մելքումյանի հետ աշխատանքը: Ասեմ, որ ավագ սերնդի ներկայացուցիչներին ես իմ պոտենցիալ ստեղծագործական ծնողն եմ համարում եւ արդեն երիտասարդների հետ պինդ հողին կանգնում:**

2016-ը Լյուբայի, ադամյանցիների եւ, համոզված եմ, մեզ համար շատ հաճելի լուրով է բացվում: Ասում են, որ արդեն մարտին կսկսվեն մեր 160-ամյա թատրոնի շենքի վերանորոգման աշխատանքները: Սա մեծ լիցք է հաղորդել մեր թատրոնին, թեեւ հակառակ փակ դռների, նրանք չէին դադարեցրել իրենց աշխատանքը եւ ներկայանում էին Վրաստանի տարբեր շրջաններում ու թբիլիսյան թատրոններում: Ուստի հարցերից վերջինը, որ բնականաբար հաջորդեց ամանորյա բարեմաղթանքներիս, կապված էր նրա ապագա ծրագրերի ու դեռ չխաղացած, բայց երազելի դերի հետ:

**- Շնորհակալություն «Վրաստան» թերթին, որ ինձ հնարավորություն է տվել շնորհավորելու բոլորիս հին Նոր տարին եւ, մասնավորապես, իմ ամենահարազատներին՝ ադամյանցիներին՝ մաղթելով, որ հաջորդ տարի հանդիսատեսի հետ մեր հանդիպումը կայանա հենց մեր թատրոնի շենքում: Ինչ վերաբերում է ծրագրերին, ապա ասեմ, որ որոշել եմ անծրագիր դիմավորել տարին**,- կատակեց Լյուբան,- **մանր-մունրը մի կողմ թողած, իհարկե, քանի որ նախորդը լի էր կորուստներով: Այս պահին ներկայացումներում ընդգրկվելու մի քանի առաջարկ ունեմ: Բայց բացե՞մ գաղտնիքս. սպասում եմ մեկին, դա Բլանշ Դյուբուայի կերպարն է Թեննեսի Ուիլիամսի «Տրամվայ-Ցանկություն» ներկայացման մեջ: Դերասանը պետք է սպասելու և այդ ընթացքում սովորելու ունակություն ունենա: Ես այդպես էլ վարվում եմ: Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:**

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*